



ԵՐԿՈՒՇԱՔԹԻ, 13 ՅՈՒԼԻՍ, 2020

ՏԵՐՈՒՆԱԿԱՆ ԱՊՈԹՔ

(միասնաբար արտասանուած)

Իմաստութիւն Հօր Յիսուս, րուր ինձ իմաստութիւն վբարիս խորհել եւ խօսել եւ գործել առաջի քո յամենայն ժամ. ի չար խորհրդոց, ի բանից եւ ի գործոց փրկեա վիս. եւ ողորմեա քո արարածոց եւ ինձ բազմամեղիս: Ամէն:

ՍԱՂՄՈՍ 75

ԱՍՏՈՒԱԾ Է ԱՇԽԱՐՀԻ ԴԱՏԱԲՈՐԸ

Գոհութիւն կը յայտնենք քեզի, ո՛վ Աստուած,
կը հռչակենք քու անունդ, եւ կը պատմենք սքանչելի գործերդ:
«Երբոր որոշած ժամանակս գայ,
եւ արդարութեամբ պիտի դապեմ, կ'ըսէ Աստուած:
Երբ աշխարհը եւ անոր բնակիչները սասանին,
եւ հաստատուն պիտի պահեմ երկրին հիմերը:
Մնապարծներուն կ'ըսեմ.- "կը բաւէ պարծենաք".
ամբարիշտներուն կ'ըսեմ.- "կը բաւէ հպարտանաք,
դադրեցուցէք ձեր ամբարտաւանութիւնը, գոռոգութեամբ մի՛ խօսիք"»:
Արդարեւ դաբաստանը ոչ արեւելքէն կու գայ,
ոչ արեւմուտքէն, ոչ հարաւէն, ոչ ալ հիւսիսէն.
այլ՝ Աստուած է դաբաւորը, որ մէկը կը խոնարհեցնէ ու միւսը կը բարձրացնէ:
Որովհետեւ Տիրոջ ձեռքին բաժակ մը կայ՝ բարկութեան թունդ գինիով լեցուն.
այդ բաժակէն խմել կու տայ երկրի բոլոր ամբարիշտներուն,
որոնք զայն պիտի քամեն իր մրուրով միասին:
Գալով ինձի, եւ յաւիտեան պիտի ցնձամ,
երգով պիտի ներբողեմ մեր հայրերուն Աստուածը:
Ամբարիշտները իրենց ամբողջ հպարտութեամբ պիտի խորտակուին,
մինչ արդարները զօրութենէ զօրութիւն պիտի բարձրանան:

ՇԱՐԱԿԱՆ- ԱՊՈԹՔ

Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա:
Սմենասուրբ Երրորդութիւն, տուր աշխարհիս խաղաղութիւն:
Եւ Հիւանդաց բժշկութիւն, ննջեցէրոց արքայութիւն:
Արի Աստուած Հարցն մերոց, որ ապաւէն ես նեղերոց:
Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Յիսուս Փրկիչ մեզ ողորմեա:

Պահապան ամենայնի Քրիստոս,
աջ քո հովանի լիցի ի վերայ իմ ի տուէ եւ ի գիշերի,
ի նստիլ ի տան, ի գնալ ի նանապարհ,
ի ննջել եւ ի յառնել, զի մի երբեք սասանեցայց.
եւ ողորմեա՛ քո արարածոց եւ ինձ բազմամեղիս:

ՕՐՈՒԲԱՆ ՆԻԹԸ



ՄԱՐԳԱՐԷՈՒԹԻՒՄ ԵՐԵՄԻԱՅԻ

50 ԳԼՈՒԽ

ԲԱԲԵԼՈՆԻ ԳՐԱԲՈՒՄԸ (50:1-3)

Իրապես զարմանալի է երբ յանկարծ կը փապալի մեծ կայսրություն մը: Կայսրություններ, որոնք ժամանակի ընթացքին իրենց բռնափրակական քաղաքականությամբ վախի ու սարսափի մաքնած էին այն բոլոր ժողովուրդները, որոնք այդ լուծին փակն էին: Որո՞ւ մտքէն կ'անցնի, թէ այդպիսի կայսրություններ կրնան փապալի: Մարդկային փրամաքանությամբ ու հաշուարկով դժուար, բայց ահա Աստուծոյ նախախնամության եւ ծրագրին մէջ կան բաժիններ, որոնք ցոյց կու փան, թէ այդպիսի կայսրություններ եւս ունին իրենց ժամանակը փապալելու: Ահա այդ կայսրություններէն մէկն է Բաբելոնը, որուն անկման պարգամը կը փոխանցուի ազգերուն, որոնց համար դժուար թէ Բաբելոնը կործանէր: Տէրը յսպափօրէն կու գայ յայտարարելու եւ ըսելու. «**Ազգերուն մէջ պարմեցէք. հրապարակեցէք ու մի ծածկէք ու ըսէք. Բաբելոնը առնուեցաւ, Բէլը ամչցաւ, Մարովդաքը կոտորեցաւ, անոր արձանները ամչցան, անոր կուռքերը կոտորեցան**» (2 հմր): Խորքին մէջ այս լուրը բարի լուր է, բոլոր ազգերուն, մանաւանդ՝ Իսրայէլին, որ կը նշանակէ անոնց գերութեան շրջանը պիտի աւարտի, ուրեմն պիտի վերադառնան: Աստուծոյ դարաստանը ընդհանրապէս չարին ու անոր մարմնացումը եղող կուռքերուն է: Անոր համար ալ այսպէս էս Բէլը ամչցաւ, Մարովդաքը կոտորեցաւ, արքայայտությունը՝ Բաբելոնի կուռքերուն, անոնց չաստուածութեան ուղղուած պարգամներ են: Ասով ցոյց կը փրտի թէ անոնց չէք կրնար վստահիլ, որովհետեւ անոնցմէ օգնություն պիտի չգայ ձեզի, անոնք պիտի կոտորուին: Ահա հիւսիսէն ազգ մը պիտի ելլէ, անոնք ալ Մարերն են, որ գալով պիտի կոտորեն Բաբելոնը:

ԻՍՐԱՅԷԼԻՆ ՎԵՐԱԴԱՐՁԸ (50:4-10)

Ներաբրբրական երեւոյթ մը կը պարզուի այսպէս. «**Այն օրերը ու ժամանակը, Իսրայէլի որդիները ու Յուդայի որդիները մէկտեղ պիտի գան, քալելով ու լալով իրենց Տէր Աստուածը պիտի փնտռեն**» (4 հմր): Ահա բաժնուած, ստրուկ ու թափառական ժողովուրդը պիտի մէկտեղուի վերադառնալու երկիր ու գԱստուած փնտռելու գղջումով ու ապաշխարությամբ: Լալը երկու իմաստներով իրենց կարարած մեղքին համար, երկրորդ՝ ուրախութեան իբրեւ արքայայտություն անոր մէջ փեսնելու Տիրոջ ողորմությունը: ԶԱստուած փնտռելը կը նշանակէ Անոր հովանիին փակ ըլլալու, Անոր պաշտպանությունը ունենալու եւ զինք պաշտելու իբրեւ ճշմարիտ Աստուած: Ահա այն արեն իրենց փրկությունը ուրախութեան պիտի վերածուի:

6-7 հմր ցոյց կու փան անգամ մը եւս Իսրայէլի ժողովուրդին մեղքը: Անոնք որպէս կորսուած ոչխար, կորսուած ըլլալու հանգամանքը անոնց հովիներուն պարճառով: Անոնց կերուեցան թշնամիին կողմէ, որովհետեւ անոնք Տիրոջ դէմ մեղք գործեցին: Ուստի եկէք եւ Տիրոջ յարինք ու Անոր հետ յախրենական ու անմոռաց ուխտ ընենք:

Ահա կու գայ ժամանակը երբ անոնք պէտք է դուրս փախչին Բաբելոնէն, որովհետեւ պիտի կողոպտուի (10 հմր):

ԲԱԲԵԼՈՆԻ ԱՆԿՈՒՄԸ (50:11-16)

Զարմանալի է, եթէ Տէրը օգրագործեց Բաբելոնը որպէս գործիք դաստիարակելու համար Իր ժողովուրդը, ինչո՞ւ հիմա Բաբելոնի անկումը կը նկարագրուի: Այո, Տէրը օգրագործեց Բաբելոնը իբրեւ գործիք, իբրեւ գաւազան դաստիարակելու համար Իր ժողովուրդը, բայց միւս կողմէ, Բաբելոն հպարտացաւ (Ես 10:5-19), անով իր ցանկությունները կարարելու համար:

ԻՍՐԱՅԷԼ ԿԸ ՎԵՐԱԴԱՌՆԱՅ (50:17-20)

Ահա Տիրոջ խոստումը կը կրկնուի ըսելով. «**Իսրայէլը իր բնակարանը պիտի դարձնեն ու պիտի ներեմ անոնց մեղքը**» (19-20 հմր): Ահա Տէրը իբրեւ ճշմարիտ Հովի պիտի հովուէ Իր հօտը վերադարձնելով զիրենք դէպի արօքավայրեր: Այս խոստումին մէջ կայ նաեւ գալիք ժամանակները Քրիստոսով կարարուելիք փրկութեան, որպէս Նոր Ուխտին նշան:

ԱՍՏՈՒԾՈՅ ԴԱՏԱՍՏԱՆԸ ԲԱԲԵԼՈՆԻՆ (50:21-46)

Այս հատուածը կը ներկայացնէ Բաբելոնին Դարաստանը, թէ ինչո՞ւ արդեօք Աստուած պիտի պարժէ, որովհետեւ անիկա ըրաւ այն ինչ որ Տէրը Ինք չէր ըսած: Տէրը զինք ուզեց օգտագործել իբրեւ գաւազան, բայց անիկա իր սրբին ու խորհուրդներուն համաձայն շարժեցաւ: Անոր համար ալ Տէրը կ'ըսէ. «Անոր իր գործերուն համեմատ հապուցում ըրէք, որովհետեւ անիկա Տիրոջ, Իսրայելի Սուրբին դէմ հպարտացաւ» (29 հմր): Տէրը նաեւ կը յիշեցնէ, որ «Իսրայելի ու Յուդայի որդիները զրկանք կրեցին, բայց անոնց Փրկիչը զօրաւոր է, Անոր անունը Զօրքերու Տէր է» (34 հմր):